ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 20 >> 02 2013թ. N: 41-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ԱԼՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք գյուղական համայնքի ղեկավար Արթուր Ալոյանը խախտելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի <<Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին>> թիվ 1477-Ն որոշման 1-ին կետի պահանջները, 2011-2012 թվականների ընթացքում առանց վարձակալության պայմանագրեր կնքելու Աշոցք համայնքի սեփականությունը հանդիսացող 954.03 հա արոտները տրամադրել է քաղաքացիների օգտագործմանը, այսինքն՝ կատարել է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 56[1]-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված խախտում:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) կողմից 2012 թվականի հոկտեմբերի 14-ին կազմված <<Հողերի օգտագործման և պահպանման խախտումների>> թիվ 28 ակտը, Տեսչության պետի 2012 թվականի դեկտեմբերի 7-ի Հ.8 որոշումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244[9]-րդ, 281-283-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք գյուղական համայնքի ղեկավար Արթուր Ալոյանի նկատմամբ նշանակել հարյուր հազար դրամ տուգանք, որը ենթակա է մուծման 15 օրվա ընթացքում՝ պետական բյուջե հ/հ 900005242954:
2. Որոշման պատճենն երեք օրվա ընթացքում ուղարկել Արթուր Ալոյանին:
3. Սույն որոշումը կարող է գանգատարկվել դատական կարգով տասն օրվա ընթացքում:

Ա. ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է